



ՌՅԻ. 1871 — ՔՍԱՆԵՐՈՐԻ ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ. — ՆՈՅԵՄԲԵՐ

ԳԱՂՂԻԱ Ի 1871 — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՍՏԵՐԱԶՄ

Գ Լ Ո Ւ Խ Է.

Ի Նէօյլի:

Սակայն վերջապէս այն կատաղու-
թեան ջարդերուն մէջէն զթուլթեան
ձայն մը լսուեցաւ 'ի նպատատ անօգնա-
կան մարդկութեան, և քանի մը ժամու
զինադադարում եղաւ որ միջոց տրուի
այն թշուառաց ուրիշ տեղ մը ապաւի-
նելու:

«Վերջապէս, կ'ըսէ ականատեսը,
նէօյլի թշուառ բնակիչք կարող եղան
իրենց գետնափոր շտեմարաններէն
դուրս ելլել: Ամբողջ երեք եօթնեակ,
ամեն վայրկեան սպասելով որ իրենց
խորտակած տանց տանիքը վրանին
կործանի, ռմբակոծութեան կատաղու-
թեանը մէջ վայրկենի մը յոգնութիւնը
խնդրելով որ շտապաւ անօթութենէ
չմոռնելու չափ կերակրիկ մը հոգան,
երեք եօթնեակաց միջոց կուրին և ռմ-
բակոծութե քօլոր զարհուրանքը կրե-
ցին: Շատերը մեռան, ամենքը ապա-
հովապէս մութերնին դրած էին որ պի-
տոր միռնին: Հիմա զարհուրելի բաներ

կը պատմուին: Երկու ծերունիք, այր և
կին, ժիլէ պանդոկէն քիչ մը վեր գըտ-
նուող տունը կը բնակէին, որ Լուվուր-
Գուռպըվուա օմնիպիլիւներու պաշտօ-
նատեղին է: Անմիջապէս պատերազ-
մին առջի օրերէն իրենց պղտի բնակա-
րանին վրայ երեք ռումբք ետևէ ետև
կոնալով զայն խորտակեցին: Խեղճ ծե-
րունիք ամեն բան կորսնցնելով, որով-
հետև իրենց կահկարասիքէն դուրս ու-
րիշ բան չունէին, ըստ սովորութեան
գետնափոր շտեմարանը ապաւինեցան:
Հոն տեղ էրիկը սարսափէն քանի մը
ժամ ետքը մեռաւ. որովհետև եօթա-
նասուն տարուան կար և սաստիկ վա-
խուն արհաւրացը չէր կրցած տանիլ:
Կնիկը քիչ մը աւելի կրասեր ըլլալով,
աւելի քաջութեամբ ալ տարաւ: Երբ
կուրը կ'ընդհատէր, — որ աւաղ, հա-
զիւ երեք կը պատահէր, — շտեմա-
րանէն դուրս կ'ելէր և իր զրացիներ
ըուն երթալով, որ հազիւ կը համար-

ձակէին գլուխնին շտեմարանին լուսա-
մբտից մօտեցնելու, կ'ըսէր.

— Էրիկս մեռաւ: Հարկ է զինքը թա-
ղել, ինչ խորհուրդ կու տաք ինձի որ
ընեմ:

Դիակը գերեզմանոցը տանելու և ոչ
իսկ խօսք ընելու էր: Ո՛վ այնպիսի ժա-
մանակ յանձն կ'առնուր ատանկ տխուր
գործ մը գլուխ տանելու: Միւս կողմա-
նէ հաւանական էր որ ճամբան դադա-
ղակիրք գնտակի մը կամ ուռմբի մը
հանդիպէին, և ան ատեն հարկ ըլլալու
էր ուրիշ մարդիկ գտնալ որ զանոնք
ալ կրեն: Անգամ մըն ալ պառաւ այ-
րին համարձակեցաւ մինչև ցՄայո դու-
ռը մօտենալու, և հոն տեղ բոլոր իր
ուժը ամփոփելով կանչեց.

— Էրիկս շտեմարանին մէջ մեռած
է: Եկէք վերուցէք զինքը ու թող տը-
ւէք մեզի Բարիդ մօտնելու:

Պահակերն որ խեղկատակ մէկ մըն
էր, — կը յուսանք որ յիրաւի այդպի-
սի էր, — զինքը հրացանով զարնելու
նշան առաւ, որով ողորմելին շտապաւ
փախաւ:

Չորս օր կար քանի որ էրիկը դիակ
դարձած էր: Խեղճ կնիկը գիշերը մե-
ռելին քովը կը պառկէր: Յորեկը, զըր-
սէն եկած լուսովը, դիակը կը դիտէր և
ահ ու դողով կը հեկեկար:

Ապա կամաց կամաց ապականու-
թիւնը սկսաւ երևան գալ: Ո՛հ, այն ա-
տեն այն թշուառ այրին չկրցաւ ժու-
ժալ: Ելաւ շտեմարանէն ու կանչեց
դրացիներուն.

— Կամ կը թաղէք զինքը և կամ թէ
չէ կ'երթամ ճամբուն մէջ տեղը կը
կանգնիմ, որ շուտ մը մեռնիմ:

« Ոմանք վրան գլծացան: Աճապա-
րեցին անոր շտեմարանը ինջան, և հոն
ծակ մը փորելով մեռելը թաղեցին: Պառաւը տասնուհինգ օր այն ուռած
հողուն վրայ նստաւ: Այսօր երբ զինքն
առնելու գնացին խենթեցածի պէս էր:
Փոսին մէջէն, զոր տգիտօրէն լեցուցած
էր, դիակին սրունքներէն մէկը դուրս
ցցուած էր:

« Ուրեմն այս առտու, 25 ապրիլ
ժամը իննէն սկսեալ, անհամար բազ-
մութիւն մը Շանդ-էլիզէն դէպ 'ի վեր
կ'երթար. ամեն հասակի և ամեն դա-
սու հետեակք կային, և ամեն տեսակ
կառքեր կը տեսնուէին: Բարիգոռ իրա-
շակն հասարակապետական Միու-
թեան ձեռք բերած զինագաղարը գոր-
ծադրուելու էր, ուստի կ'երթային Նէոյ-
լի խեղճ բնակիչներն առնելու: Սակայն
մեծ զգուշութեամբ կը յառաջէին, ո-
րովհետեւ դեռ ևս ոչ թնդանօթին և ոչ
հրացանին թնդիւնը լուր էր. և շարու-
նակ կը վախնային որ չըլլայ թէ այն
խիտ բազմութեանը մէջ գնտակ մը
իյնայ: Կռանտ-Առմէ ճամբուն վրայ է-
դուալ զղեակ ըսուած տունը ուռմբ
մը իյնալով հրդեհներ էր զայն: Հանդերձ
այսու հրետից մենամարտութե սաստ-
կութիւնը նուազեցաւ, յետոյ բոլոր-
վին դադարեցաւ, և ամենքը դէպ 'ի
պատուարները յարձրկեցան:

« Մայո դուռը, ստոյգն ըսելով, ալ
չկայ: Շատոնցունէ 'ի վեր, ընդդէմ
ամենայն վկայութեան վիճակին, շար-
ժական կամուրջը տեղէն խախտեր է,
պարիսպք կործանած և խրամը լցուած
է: Կայարանը ալ անձև կոյտ մըն է
սեւացեալ քարերու փշրեալ վիմաց բե-
կորներու, խորտակած ապակէից և դա-
լար դալար եղած երկաթից. այն խո-
րափոր երկաթուղին ուսկից կառատոր-
միդք կ'անցնէին, որմոց վրատակներով
լցուած է. անցնելու համար հարկ է
շրջան մը ընել:

« Կրնայ մարդ երևակայել թէ ինչ
խառնակութիւն ըլլալու է հոն տեղ
այն հաղարաւոր մարդոց, կահկալա-
սեաց կառքերու և սայլից պատճա-
ռաւ, որոնք ամենը դէպ 'ի մի և նոյն
կէտը կը դիմեն: Ամենը մի և նոյն ա-
տեն անցնիլ կ'ուզեն. կ'աղաղակն,
մէկզմէկ կը մըղեն, մէկզմէկ կը խղղեն:
Անօգուտ տեղ ազգային պահանջողք
քիչ մը կարգ դնել կ'ուզեն: Այս ալ
ըսելու ենք թէ կարծես թէ դժուարու-
թիւնները շատցնելու համար է որ սնց-
նելու թոյլտուութիւնը ստանալու հա-

մար հարկ է մէկ քանի արարողութեց հպատակիլ: Ես վերջապէս կը յաջողիմ սայլի մը յարելու՝ որ Բարիզէն ելլելու վրայ է, և հազարումէկ անգամ քշուելէն ու կանկ առնելէն ետեւ, պատուտած զգեստներով՝ ի նէոյլի կը մտնեմ:

« Տեսարանը ահաւոր է: Նախ մարդու աչքին ընդարձակ բոլորչի միջոցը կը ներկայանայ, որ զինուորական գօտի կ'ըսուի: Փոշիի անապատ մըն է, ուր մէկ շէնք մը միայն կանգուն կեցած է, որ է Լոնջանի մատուռը, զոր վերադարմանութեան տեղի ըրած են, և վրան ծածանող կարմիր խաչով սպիտակ դրօշը կը տեսնեմ: Ստոյգն ըսելով, վերաւորք ապահով ըլլալու չեն այդ գերեզմանին մէջ, որ ութաց ճամբուն վրայ է: Զախակողմը՝ Պուա տը Պուլոններ կը գտնուի, կամ գոնէ այն տեղն որ երբեմն Պուա տը Պուլոններ եղած էր. վասն զի գտնուած տեղէս, շատ քիչ ծառ կը տեսնուին, և անտառը ահագին մեծութեամբ ծառազուրկ ամայացած միջոցներ կ'երեցընէ:

« Շտապաւ յառաջ կը քալեմ, թէպէտ միւս կողմանէ ալ ամբոխը զիս կը մղէ: Վերջապէս ահա նէոյլին. ապականութեան աւերը կատարեալ է: Իրականը բոլոր երեւակայածէս վեր է: Խորտակած տանիք տանց պատուհաններուն մէջէն դուրս կը ցցուին: Պատեր կան որ բոլորովին կործանած են. անոնք ալ որ դեռ ևս կանգուն կը տեսնուին, մեծամեծ սևացեալ ծակերով ծակծրկած են: Այս ծակերէն է որ ուռմբք ներսը մտնելով ճաթեր են, զկահարասիքը, պատիներները, հայելիները խորտակելով, տեղերնէն խախտելով ու փշրելով, և մարդիկն իսկ կտոր կտոր ընելով: Շարունակ անցւորաց ոտքին տակը ապականաց կը տորներուն ջախջախը կը լսուի. և ոչ պատուհան մը կայ որ գոնէ ապակի մը ողջ ունենայ: Միջոցէ միջոց տուններ կը տեսնուին, որոնց վրայ, չգիտցուի թէ ինչու, գնտակը հեղեղորէն կատաղութեամբ անձրեւած են, մինչև աւերակաց կոյտ ընել զանոնք, ուսկից

հողմը աղիւսաց և շաղախի փոշի մը կը թռցնէ:

« Է՛հ, ուրեմն, Բարիզեցիք, ինչ կ'ըսէք ատոր համար: Դուք ալ նոյն այս բանը չէիք մտածեր, թէ Գլիւզոէ, թէ պէտեւ Ամերիկացի, սքանչելի Գաղղիացի մըն է. և թէ ժամանակը հիմայ չէ այսպիսի իմաստով վճիռ մը հրատարակելու. « Նկատելով որ եթէ նէոյլի մոխիր դարձած է, Գաղղիա այդ բարեբաղդ հետեանքը զլիաւորապէս պարտական է պատերազմի գործակաւորին կարգադրած չքեղ դիմակալութեանը, ուստի և կը վճռէ. Մի միայն յօդուած. Գլիւզոէ քաղաքացին, նէոյլի կործանիչը, Գաղղիոյ և Հասարակապետութեան արժանաւոր է:

« Արդ ամեն տուններէն, կամ գոնէ բոլոր տանց մնացորդներէն արանց բազմութիւն մը դուրս կը յարձրկին, ստուներով, անկողիններով, արկղերով բեռնաւորած: Կարծես յարութիւն առնողք են որ իրենց գերեզմաններէն դուրս կ'ելլեն: Ազգականք զազգականս կը համբուրեն. ալ մէկզմէկ տեսնելու յոյս չունէին: Կ'երթան, կու գան, կը վազեն: Անոց լիսեռները խորտակելու չափ կառքերը կը բեռնաւորեն: Մըտքերնին դրած էին թէ ամեն բան կորսուած է. հիմա բան մը մոռնալ չեն ուզեր: Արդէն այն մարդիկ որ երազութեամբ կարասնին վերուցեր են, Մայո դուռը կը փութան: Ո՞վ զանոնք հիւրընկալէ պիտի այն ընդարձակ Բարիզու մէջ. կարծես թէ ատոր վրայ ամենեկին հոգացող մը չկայ: Այդ մարդոց և առարկայից անհուն շարժումը, այն արևուն յստակ պայծառութեանը տակ գրեթէ զուարթ երեղթ մ'ունի: Ժամանակը շուտ կ'անցնի, հարկ է փութալ. քիչ ատենէ կարճ զինադադարը լմնայ պիտի: Ուշացողներն իրենց գըրպանները կը լեցնեն և կռնակնին կը բեռնաւորեն: Բարիզու դռները առաւօտունէ տւելի շատ խռնած խափանուած են, վասն զի կառքերը շատ բեռնաւորած, հազիւ թէ ծանր ծանր կըրնան յառաջ երթալ, և միշտ ալ կոր-

ծանելու մատ են: Ամենքը կրցածնուն
չափ կը պոռան, մէկզմէկ մղելով կ'ար-
գելուն. սակայն վերջապէս կ'անցնին,
կ'ապահովման, և շուտ մը դադարողաց
սայլերը բոլոր փողոցներուն մէջ կը ցը-
րուին: Խորայեւացւոց եկբը կը նմանի:
Սակայն Բարիզ ճրչափ տխուր է աւե-
տեաց երկիր մը ըլլալու:

« Եւ արդ երկուստեք սկսեցէք շառա-
չելու հրեաք և հրացանք, վասն զի հարկ
է որ մէկ կողման ջնջուելովը այդ զար-
հուրելի կռիւը լմննայ: Հապա, սպան-
նեցէք, մի և նոյն երկնից ներքեւ ծնած
պատերազմողք, որովհետեւ անհրաժեշտ
այդ բանը կ'ուզէք. գոնէ մէկ քանի կա-
նայք այս զիշերը խաղաղ պիտոր հանգ-
չին »:

Այս ահաւոր պատկերին ուրիշ քըստ
մընելի դէպք մըն ալ այս է: « Դէռնի
ճամբէ մեռելի մը յուղարկաւորութիւ-
նը կ'անցնէր: Դագաղը շատ պզտիկ էր
և երկու հոգի մէյմէկ ծայրէն բռնած
կը վերցնէին. տղու մը դագաղն էր:
Ետեէն պլուզով գործաւոր մը կը քա-
լէր, անտարակոյս հայրը, և մէկ քանի
բարեկամք: Շատ տըխուր տեսարան
էր, բայց պատահածը քսամնելի բան
մըն է: Մոն վալէռիէնէ եկող ռումբ մը
յանկարծ պզտի դամբանական արկղին
վրան կ'իյնայ, և ճաթելով, տախտակի,
ոսկերց ու մսի կտորներ հօրը երեսը կը
նետէ: Մի և նոյն ատեն թէ դիակը և
թէ արկղը փշուր փշուր մանրուեր էին:
Մահը ջարդել: Հարկ է խոստովանիլ որ
ռմբաձիգք ճարտար և յետին առաիճա-
նի կիրթ ապականիչ են »:

ՄՈՒՐԻԼԵՕ. ԵՒ ԻՐ ՏԻՐԱՄՈՐ ՆԿԱՐԸ

(Տես երես 328-329:)

Բարթոլոմէոս Ստեփանոս Մուրի-
լեօ ծնաւ 'ի Սիւրիլիա 1618 տարւոյն
առջի օրը, և կոչուեցաւ 'ի բնութենէ
Սպանիոյ առաջին նկարիչն ըլլալու:
Կրնամք ըսել որ իրեն նախնական կըր-
թութիւն տուողն իտալիան եղաւ, վասն

զի Յովհաննէս Գասպարիլեօ իր ուսուցիչն՝
Փլորենտինոս դպրոցէն սորվեցաւ նկար-
չութիւնը: Եթէ Մուրիլլեօ անոր աշա-
կերտած ալ չըլլար, դարձեալ միշտ ի-
րեն առջի կրթութիւն տուողն իտալիան
կրնայ համարուիլ. վասն զի իր բնակած
երկիրն արդէն իսկ նախ իտալիա փայ-
լող արուեստից լուսէն լուսաւորուած
էր, այնու որ մեծահամբաւ նկարիչք,
ընդ որս Դիցիանոս, Սպանիա երթալով
հոն անմահական գործեր 'ի լոյս ըն-
ծայեցին:

Բայց ոչ միշտ արհեստի մը մէկ տե-
սակ գաղափարական օրինակի ընտրու-
թիւնը 'ի նմանութիւն՝ աղէկ է. վասն
զի նոյն իսկ իտալիա ամեն տեսակի
կատարեալ նկարներ 'ի լոյս ընծայած
չէ: Մուրիլլեօյի ուսուցիչն թէպէտ կըտ-
րիճ 'ի նկարչութեան, բայց պակասա-
ւոր էր գունոց նկատմամբ, և իր աշա-
կերտն եթէ յամենայնի նմանէր իրեն,
այդչափ մեծանուն և համբաւաւոր չէր
հանդիսանար: Ուստի երբ իր ուսու-
ցիչն մեկնեցաւ Սիւրիլիայէն, Մուրիլլեօ
թողուց նկարչութեան այդ ոճը, և սկը-
սաւ ըստ իրեն ախորժանաց գոյն տալ
նկարուց, մերթ այս և մերթ այն նկա-
րիչն իրեն օրինակ 'առնելով: Գեղեցիկ
արուեստից պատմութեան մէջ ինքն
միայն չեղաւ, որ նախ քան կատարե-
լութեան հասնելու՝ այլ և այլ ճամբա-
ներ փորձած, քայլ առ քայլ յառա-
ջացած, և զանազան նկարիչներ իրեն
օգնական առած ըլլայ, վերջապէս 'ի
բնութենէ ծածուկ իրեն համար սահ-
մանած կէտն հասնելու համար: Նոյն
իսկ Ռափայէլ՝ զլէոնարտոս տա վինչին
զՄիքէլանճելոն և զուրիշներն իրեն օրի-
նակ առած է. բայց միշտ իտալական
դպրոցի մէջ կենալով, ինչու որ նոյն
ատեն իտալիայէն դուրս արժանաւոր
սորվելու բան չըկար, իտալիան միայն
ըլլալով ազգաց ուսուցիչն:

Բայց Մուրիլլեօյի ժամանակը նոյնպէս
չէր, այլ արուեստներն ամեն կողմ տա-
րածուած էին, և նոյն իսկ Ֆիանտորայի
մէջ երեւելի հանճարներ կը փայլէին
թէպէտ այս այսպէս էր, բայց Մուրի-